ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ
135-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ*
(Ընդհանուր բնութագիր)

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Թուրքական դարավոր բռնակալության դեմ արևմտահայ ժողովրդի երկարատև ու արյունալի ազատագրական պայքարը հրապարակ բերեց անվեհեր մարտիկների և նվիրյալ գործիչների մի փայլուն համաստեղություն. Աղբյուր Սերոբ, Գևորգ Չաուշ, Հրայր, Սեբաստացի Մուրադ, Արմենակ Եկարյան, Համբարձում Պոյաջյան, Քեռի, Համազասպ, Սեպուհ: Շատ են թանկագին անունները, որոնք հավերժ կմնան ժողովրդի հիշողության մեջ:

Բայց փառապանծ անունների շարքում բացառիկ և գագաթնային տեղը անվերապահորեն պատկանում է հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկ Օզանյանին: Նրա կյանքը լի է հեքիաթային սխրագործություններով: Նա էր, որ հարազատ ժողովրդի ռազմական առաքելությունները և մարտական ոգին բազմաթիվ ճակատների վրա և անհնարին թվացող պայմաններում հասցրեց աննախընթաց բարձունքների:

Անդրանիկն իր հրամանատարության տակ երբեք չի ունեցել բազմաքանակ բանակներ, ինչպես, ասենք, ուներ մեր ժողովրդի մյուս փառապանծ զավակը Հովհաննես Բաղրամյանը: Բայց դա արգելք չհանդիսացավ, որպեսզի Խորհրդային Միության մարշալն իրեն և Երևանում հիմնադրված Ալ. Մյասնիկյանի անվան զինվորական դպրոցում կրթություն ստացած ապագա հայ դեներալներին համարի մեծ հայդուկապետի աշակերտներ: Բաղրամյանին և մյուս հայ զորավարներին ոգեշնչել է ոչ միայն Անդրանիկի ռազմադիտական արվեստը, այլև լեգենդար այդ անձնավորության մարդկային կերպարը: Մարշալի համար Անդրանիկն իր ժողովրդի ազատագրության գործին անմնացորդ նվիրումի, առասպելական քաջության, մարդկային վսեմ առաքինության խորհրդանիշ էր:

** Զեկուցում կարդացված 2000 թ. փետրվարի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունում կայացած գիտաժողովում՝ նվիրված զորավար Անդրանիկ Օզանյանին:*

Անդրանիկն ամենից առաջ ֆիդայի էր, հայդուկապետ, հետո՝ զորավար: Մղել է փոքր ու մեծ բազմաթիվ կռիվներ, տվել 30-ից ավելի ճակատամարտ և միշտ փայլել է ռազմագիտական անթերի արվեստով, հնարամտությամբ ու խելքով: Թռուցիկ հիշատակենք հերոսի հրամանատարությամբ մղված կռիվներից մի քանիսը. առասպելական դյուցազնամարտ Առաքելոց վանքում (1901 թ.), հերոսական ապստամբություն Սասունում և կռիվներ Մշո դաշտում (1904 թ.), հայկական կամավորական վաշտի խիզախ ռազմերթեր բուլղարական կամավորական դրուժինայի կազմում (1912 թ.), Հայկական առաջին կամավորական գնդի սխրագործություններ ռուսական կովկասյան բանակի շարքերում (1915-1916 թթ.), Անդրկովկաս ներխուժած թուրքական հրոսակների դեմ Հայկական երկրապահ դիվիզիայի օրհասական մարտեր (1918 թ. վետրվար), Հայկական Առանձին հարվածող զորամասի խիզախ մարտնչումներ (1918 թ. ապրիլ-մայիս), նույն զորամասի մարտական գործողություններ Պարսկաստանում, Նախիջևանում և Զանգեզուրում (1918 թ. հունիս-1919 թ. ապրիլ):

Այդ բոլոր կռիվները Անդրանիկը մղել է հարազատ ժողովրդին հարստահարող թուրք բռնադատիչների, նրանց գավթիչ բանակների դեմ: Հերոսն ասել է. «Ես մեկ իդեալ և մեկ նպատակ ունեի՝ հարվածել մեր դարավոր թշնամուն: Ասկե դուրս որևէ պետության կամ կառավարության դեմ հանդես գալուն հակառակ մնացի մինչև վերջ»:

Անդրանիկի բնածին ռազմագիտության, հնարամտության և խիզախության մասին հիացական կարծիքներ են հայտնել զորավարներ Զերնոզուբովը, Օգանովսկին, Նազարբեկովը, Կուլեբյակինը, Տրուխինը, Նիկոլաևը և շատ ուրիշներ: Նրա ռազմական բացառիկ տաղանդը բարձր են գնահատել դաշնակից երկրների կառավարությունները: Հերոսն արժանացել է ռուսական, բուլղարական, հունական, ֆրանսիական շքանշանների, կրել է ռուսական բանակի գեներալ-մայորի ուսադիրներ:

Անդրանիկի մղած ճակատամարտերից ու կռիվներից ամեն մեկն արժանի է խորն ու մանրակրկիտ ուսումնասիրության: Դրանք, լինելով ռազմական արվեստի փայլուն դրսևորումներ, անշուշտ, պետք է մեր օրերում հաստատուն տեղ գրավեն հայկական բանակի սպայական դպրոցների դասընթացներում և ուսումնական ծրագրերում: Ժամանակն է նաև, որ մեր բանակն ունենա ռազմական արվեստի իր տեսաբաններն ու պատմաբանները, որոնց պատրաստման գործին, կարծում եմ, աջակից կարող է լինել Գիտությունների Ազգային սկադեմիան:

Հերոսի մասին գրվել են մեծ թվով հոդվածներ, հուշեր, պատմագիտական ուսումնասիրություններ, նրա կատարած գործերին անդրադարձել են ռուսական, եվրոպական, ամերիկյան մամուլի բազմաթիվ օրգաններ: 1920-60-ական թթ. Սփյուռքում ազգային հերոսի մասին լույս է տեսել 13 գիրք: Հայաստանում անդնահատելի է եղել Աշոտ Հարությունյանի կատարած գործը: Նրա ջանքերով հանրապետությունում կենտրոնացան սփյուռքահայ գործիչների մոտ գտնվող Անդրանիկին վերաբերող համարյա բոլոր նյութերը: Պատմության պետական արխիվում ստեղծվեց զորավարի ֆոնդը (370-րդ ֆոնդ), ուր ներկայումս ամփոփված է շուրջ 8000 միավոր նյութ. դրանք վավերագրեր են, հուշեր, նամակներ, նկարներ, քարտեզներ և այլն: Այդ ֆոնդը կարգաբերելու ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել Գալուստ Գալոյանը՝ հանդիսանալով նյութերի մշակման գիտական ղեկավարը: Նա է նաև Անդրանիկին վերաբերող փաստաթղթերի և նյութերի առաջին ծավալուն ժողովածուի գլխավոր խմբագիրը: Զորավարի 1918-1919 թթ. գործունեությունն արտացոլող բազմաթիվ նորահայտ նյութեր տեղ են գտել Վարդգես Միքայելյանի կազմած ու խմբագրած՝ Լեռնային Ղարաբաղին նվիրված փաստաթղթերի ժողովածուի մեջ: Այս շնորհակալ գործերը պատմաբաններին հնարավորություն տվեցին հանդես գալ մենագրություններով ու այլ հրապարակումներով:

Անդրանիկի մասին առաջինը հոդված տպագրեց Մկրտիչ Ներսիսյանը՝ զորավարի ծննդյան 100-ամյակի առթիվ և դրանով, ըստ էության, սկզբնավորվեց անդրանիկագիտությունը մեզանում: Զորավարի հերոսապատումների պրոպագանդման գործում մեծ ծառայություններ ունեն Մատուր Աղայանը, Արամայիս Մնացականյանը, Գևորգ Ղարիբջանյանը, Համբարձում Կարապետյանը, զորավարի գործունեությանն իրենց աշխատություններում անդրադարձել են Հրանտ Ավետիսյանը, Ազատ Համբարյանը, Ստեփան Պողոսյանը և ուրիշներ:

Ստեղծված աշխատություններն ամենից առաջ երախտագիտության տուրք են Անդրանիկի անձին ու գործին: Սակայն ազգային հերոսի առավել ճշմարիտ գնահատողը եղավ ժողովուրդը, որն իր մեծ զավակին ձոնեց սրտառուչ երգեր ու ասքեր՝ պանծացնելով նրա առասպելական քաջությունը:

Ժողովուրդն իր հերոսներին՝ Սերորին, Զաուշին, Իշխանին և Վարդանին, Նիկոլին ու Սաքոյին և մյուս քաջերին օժտել էր երևակայական, գերմարդկային, գերբնական ուժով, նրանց մեջ փնտրում էր իր կրած տառապանքի սփոփանքը: Իսկ Անդրանիկի կերպարը հորինելիս ու կերտելիս նա ոչ մի կապանք չէր հանդուրժում իր երևակայության թռիչքի պահին: Նրա պատկերացմամբ Անդրանիկը հեքիաթային անհաղթ դյուցազո՛ւն էր, որն «իբրև արծիվ սավառնում է լեռ ու ժայռ», «թնդացնում երկինք-գետին տենչավառ»: Մարդկանց երևակայության մեջ Անդրանիկի կերպարում հարություն էին առել և կրկնվել Սասունցի Դավիթը և Դավիթ Բեկը: Հայերն իրենց հերոսին մաղթում էին նոր հաղթանակներ.

Անհաղթ մնաս, դու քաջ կռվի սիրահար,
Հայրենիքի տեր ու պաշտպան, Անդրանիկ:

Կովկասում հայ աշուղներ կային, որոնք ազգի հերոսներին երգեր էին ձոնում՝ զավեշտալից չափազանցություններով, և ամբոխը անսահման խանդավառվում էր: 1916 թ. ամռանը Անդրանիկը Թիֆլիսում էր: Տանն էր, երբ մի աշուղ փողոցով անցնելիս երգում է հերոսին նվիրված նոր երգերից մեկը, ուր կային այս խոսքերը.

Հերոս մռնչաց, Սուլթան դողաց,
Վիլհելմի աչքից արտասուք չողաց...:

Լսելով երգի տողերը, Անդրանիկը նրա ետևից գոչում է. «Շան որդիք, այդ ինչ ամոթալի չափազանցություն է»:

Անդրանիկին նվիրված իր հուշ-էսսեում զավեշտական մի դեպք է նկարագրել Ավ. Ահարոնյանը: Հայ կամավորական գնդերի լուծարումից հետո զորավարը որոշ ժամանակ ապրում էր նրա տանը: Օրերից մի օր, երբ նրանք երկուսով տանն էին, լսվում են աշուղների սազի ու երգի ձայներ: Ահարոնյանը դուրս է գալիս պատշգամբ և նայում վար. երգիչը մի կույր ծեր աշուղ էր, որին առաջնորդում էր հաշմանդամ ոտքերով մի ծռմռված թշվառ: Երգը ռամիկ պարզություն ուներ և վերջանում էր հետևյալ հանգերգով.

Գնանք Անդրանիկին օգնության:

«Անդրանիկ, արի՛, արի՛»,- գոչում է Ահարոնյանը: Անդրանիկը դուրս է գալիս պատշգամբ և նույնպես ներքև նայում: Ծռմռված ոտքերով հաշմանդամը դեռ գոչում էր.

Գնանք Անդրանիկին օգնության:

«Ա՛յ Աստված, ձեր տունն ավրի,- ասում է հերոսը,- թե սրանք պիտի օգնեն, վա՛յ Անդրանիկին»:

Անշուշտ, զավեշտական էր այս ամենը, բայց սա նաև ժողովրդի անհուն սիրո վկայությունն էր հերոսի հանդեպ: Երևույթը ճիշտ է դիտարկել Ահարոնյանը, գրելով. «Զուլումի տակ կորաքամակ ազգը երջանիկ էր, որ մեկը կա լեռներում, մենավոր առյուծ, որ աջ ու ձախ հարվածում է իր դրացիներին»: Նա միայնակ չէ, նրա հետ են հայոց բոլոր քաջերը՝ «աջից՝ Վարդանը, ձախից՝ Իշխանը»:

Ժողովրդի պատկերացմամբ հերոսը շարունակ թուրը ձեռքին էր, ճակատամարտերի ժխորի մեջ և անընդհատ հարվածներ էր հասցնում դարավոր թշնամուն:

Խաղաղություն երազող հայերի բորբոքվող երևակայության մեջ Անդրանիկը թշնամու բանակների դեմ ոչ թե պաշտպանողական կռիվներ էր մղում, այլ ինքն էր միշտ նախահարձակը.

Անդրանիկը քաջ ... կուզե պատերազմ:

Այո՛. «կուզե պատերազմ» - համոզված էր ռամիկ ժողովուրդը, համոզված էին նրա շարքային զինվորները:

Չէ՞ որ Սասունի հերոսը Մհերի ժառանգն է, ուրեմն և նրա պես վիթխարի է, ձայնը՝ ահազնադղորդ, բազուկը՝ խորտակիչ, աչքերը՝ կայծակի:

Իբրև անհատ, Անդրանիկն իր ազգի նման բարդ էր ու հակասական: Նա տրամադրության մարդ էր. անգիջում էր, երբ խոսքը վերաբերում էր սկզբունքներին, դաժան էր, երբ խախտվում էր զինվորական կարգապահությունը, երբ ականատես էր լինում անսիրտ վերաբերմունքի, շահամոլության, անարդարության: Բայց նրա սիրտը տոչորում էր դժբախտների ու զրկվածների համար, ծայրահեղ հոգատար էր շարքային զինվորների նկատմամբ: Գրականության մեջ շարքային զինվորի հանդեպ Անդրանիկի կոպիտ վարմունքի մեկ-երկու դեպք է միայն արձանագրված: Այդ եզակի դեպքերից մեկը կապված էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ուսանողներից մեկի հետ, որը հայրենասիրական մղումով 1914 թ. թողել էր ուսումը, մտել ազգային հերոսի կամավորական գնդի շարքերը և մարտերով հասել Վան: Անդրանիկը նրան ապտակել էր զինվորական կարգապահությունը խախտելու համար: Մի քանի օր հետո երիտասարդը հիվանդացել էր, և Անդրանիկը նրան ետ էր ուղարկել Թիֆլիս: Դա Անաստաս Միկոյանն էր: Օգտագործելով Անդրանիկի կամավորական գնդում Միկոյանի լինելու փաստը, ժողովրդի դահիճ Բերիան տարիներ շարունակ ահաբեկում էր նրան:

Եթե հերոսը հոգատար էր հասարակ մարդկանց նկատմամբ, ապա, լինելով ըմբոստ հոգու տեր, հանդուգն էություն, միանգամայն այլ վերաբերմունք ուներ դեպի պաշտոն կամ հարստություն ունեցողները: Ղեկավար-դործիչներից բացառություն էր Ռոստոմը, որի նկատմամբ ուներ անսահման հարգանք և հիացում: Սիմոն Վրացյանը դրել է, որ Անդրանիկը ծեծել է շատ ղեկավարների և որ իբր ինքը քչերից մեկն է, որ նրա բռունցքի կամ հայհոյանքի համը չի ճաշակել: Իրականում, սակայն, ինչպես պարզվում է ականատեսի հուշերից, նա նույնպես Անդրանիկի «դաստիրակությունը» ճաշակողներից մեկն է եղել:

Թեև Անդրանիկի ուսումնառությունը սահմանափակված էր մի քանի տարով, բայց նա կարողացել էր ինքնակրթությամբ լրացնել բացը: Հերոսն անձնապես մոտ հարաբերությունների մեջ էր ժամանակի հայ մտավորական գործիչների հետ, կարդացել էր հայ գրողների առավել հայտնի երկերը, անգիր գիտեր իր պաշտելի ընկերոջ՝ Հովհ. Թումանյանի ստեղծագործություններից շատերը, ամբողջ հատվածներ էր արտասանում

«Անուշ» պոեմից: Երբ հոդին հանդարտ էր լինում, շրջապատին գերում էր անվերջ պատմություններով և սրախոսություններով:

Խնջույքների ժամանակ, հատկապես Թիֆլիսում՝ Թումանյանի տանը, Անդրանիկը սիրում էր երգել Ջիվանու երգերը: Իսկ որպիսի՜ ոգեշնչվածությամբ էր արտասանում Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Եղբայր եմք մենք» բանաստեղծությունը, հատկապես դրա վերջին տողերը.

Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Բայց Անդրանիկի կյանքում ուրախության պահերը հազվադեպ են եղել: Մեծադույն փառքի և մի ամբողջ ժողովրդի անհուն երախտագիտությանն արժանացած հերոսը չունեցավ լիարժեք անձնական կյանք: Իր մասին մտածելու ժամանակ չուներ: Տասնամյակներ շարունակ առանց ընտանիքի էր, չունեցավ զավակներ: Կյանքի մեծ մասը հերոսն անցկացրել է նյութական դժվարությունների մեջ: Այդ մասին են խոսում նրա ընկերների ու բարեկամների բազմաթիվ վկայությունները: Բայց Անդրանիկն ինքը մեկ-երկու անգամ է միայն տրտունջ հայտնել իր նյութական վիճակից: Հոգ աղջկան՝ Արմենուհուն Վառնայից (Բուլղարիա) 1909 թ. հունիսին ուղարկած նամակում նա գրել է. «Անուշիկս, գիտցիր, որ լոկ անունս է, նյութականե զուրկ եմ... Այստեղ կյանքը շատ սուղ է: ...Ամբողջ կյանքս ալեկոծման մեջ է եղած: Կրնամ ըսել, որ ոչ մի երջանիկ օր չեմ ունեցած, տեսնենք սրանից հետո ինչ պիտի բերե բաղդս»: Նյութական անապահովությունը նրան հետապնդել է հատկապես կյանքի վերջին տարիներին, երբ նա հաստատվել էր Կալիֆորնիայում Ֆրեզնոյում:

Հայ ժողովրդի ազգային հերոսը ոչ միայն զենքի մարդ էր, այլև իմաստուն քաղաքական գործիչ: Նա իր ժողովրդին է թողել մնայուն ավանդներ, որոնց հավատարիմ պիտի մնան հայոց ներկա և գալիք սերունդները:

Առաջին. Անդրանիկը գտնում է, որ Անդրկովկասի երեք ժողովուրդները՝ վրացիները, հայերը և ադրբեջանցիները, պետք է համատեղ լուծեն իրենց միջև եղած տարածքային խնդիրները և բռնեն հաշտ ու խաղաղ ապրելու ճանապարհը: Նա հատկապես կարևորում էր հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը՝ որպես երկու ազգերի բարվոք ապագայի երաշխիք: «Բանի դեռ հարևանությամբ ապրող ժողովուրդները չեն հանգել միմյանց հանդուրժելու գաղափարին,- ասում էր նա,- խաղաղություն լինել չի կարող»:

Երկրորդ. ազգային հերոսը բարձր էր գնահատում Արևմուտքի քաղաքակրթական արժեքները: Բայց նա ամենից ավելի գնահատում էր Ռուսաստանի խաղացած գրական դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Նա Ռուսաստանը համարում էր Հայաստանի բնական ռազմավարական դաշնակիցը: Անդրանիկը հիշեցնում էր, որ դեպի Հայաստանը Ռուսաստանի բարյացակամությունը թելադրված է ոչ թե հայության նկատմամբ նրա կառավարողների ունեցած սիրով, այլ Կովկասի և Մերձավոր Արևելքի տարածաշրջանում ունեցած ռազմավարական շահերով, որոնք հաճախ են համընկել հայ ժողովրդի ազգային շահերին և ապագայում էլ պիտի համընկնեն: Դա նշանակում է, որ երկուստեք այդ շահերը անցողիկ չեն, այլ տևական:

Երրորդ. Անդրանիկը հաճախ է եղել Պարսկաստանում, այդ երկրի տարածքներով երկու անգամ իր կամավորական գունդը մարտերի է տարել թուրքական զորքերի դեմ: Նա գտնում էր, որ հայերը և պարսիկները քույր ժողովուրդներ են: Իհարկե, երկար դարերի ընթացքում նրանց փոխադարձ շփումների պատմության մեջ լուսավոր էջերի կողքին եղել են

նաև տհաճ իրադարձություններ, բայց վերջիններս չեն կարող երկու ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների և ամուր բարեկամության հաստատման համար արդելք դառնալ:

Չորրորդ. եթե ազգային հերոսը Ռուսաստանը համարում էր Հայաստանի ռազմավարական դաշնակիցը, իսկ Պարսկաստանը՝ հնարավոր բարեկամը, ապա միանշանակ մերժում էր թուրքական պետության հետ հայ ժողովրդի բարեկամությունն այնքան ժամանակ, քանի դեռ իր պաշտելի հայրենի երկիրը կշարունակի մնալ դարավոր թշնամու կրնկի տակ: «Ես թուրք լավ կը ճանչնամ,- ասում էր նա: -Ոչ մեկ թուրքի չեմ կրնար հավատալ եթե նա երկնքեն իսկ իջած ըլլա»:

Հինգերորդ. թեև ազգային հերոսի կյանքի վերջին ութ տարիներն անցան հեռուներում, բայց նրա մտածումները միշտ հայրենիքի հետ էին: Նա մեծ տագնապ ու տառապանք էր ապրում, երբ 1920 թ. աշնանը Հայաստան ներխուժած թուրքական զորքերը պարտության էին մատնում հայկական բանակին, իսկ ինքը գտնվում էր հայրենիքից հեռու:

Հայաստանի Առաջին Հանրապետությանը փոխարինած Երկրորդ հանրապետությունը՝ Խորհրդային Հայաստանը, իր մեծ ճանապարհը սկսել էր ժողովրդի շինարար տքնությամբ: Ազգային հերոսը դարձյալ հայրենիքի հետ էր: Իր ելույթներում նա մշտապես շեշտում էր, որ պատմական տվյալ ժամանակահատվածում, միջազգային-քաղաքական աննպաստ պայմաններում, խորհրդային կարգերը խիստ բարենպաստ են Հայաստանի համար, քանի որ սատարում են բնաշխարհի հայության պահպանմանը, ապահովում նրա անվտանգությունը: Նա ոգեշնչված էր Խորհրդային Հայաստանի իրականությամբ, մեծապես ուրախանում և հպարտանում էր նրա ժողովրդի հեքիաթային մեծագործություններով, հայոց ազգային վերածննդով, երազում էր կյանքի վերջին տարիներն անցկացնել հայրենիքում:

Եվ, վերջապես, Անդրանիկը ազգային միասնության հետևողական ջատագով էր և չէր հանդուրժում ազգային պառակտումը: Նա կարողացավ վեր բարձրանալ ազգային-հատվածական կողմնորոշումներից և գործակցել բոլոր նրանց հետ, ովքեր առանց երկմտելու գնում էին հայրենիքի ազատագրության համար պայքարի ճանապարհով: Նրա ղեկավարած զորամասերում դաշնակցականն ու ռամկավարը, հնչակյանը և անկուսակցականը կողք կողքի էին, բոլորն էլ կիսում էին նույն ուրախությունները ու դառնությունները: Պատահական չէ, որ հերոսին իրենցն էին համարում հայության բոլոր հատվածները, բոլոր ուղղությունները ու շարժումները անխտիր:

Դարերի ընթացքում մեր ժողովրդի մեջ զարգացել է անհատական գիծը: Մեր պատմությունը ցուցահանդես է եղել ընդգծված անհատականությունների, որոնց ճիգերի գերակշիռ արդյունքը եղել է հավերժական բաժանումը, վեճն ու կռիվը, եղբայրասպան պայքարը: Ունեցել ենք, իհարկե, մշակույթի հզոր ոստումներ, հաղթանակների դափնիներ, դրական ոսկեդարեր, բայց չենք ունեցել կամ համարյա չենք ունեցել եղբայրական միության և սիրահոժար համագործակցության տևական ժամանակներ: Մեր երկարատև պատմության մեջ թերևս երջանիկ բացառություններ եղան Սարդարապատի հերոսամարտի օրերը և Ղարաբաղյան համաժողովրդական շարժման առաջին երկու-երեք տարիները, երբ երկու դեպքում էլ հայ ժողովուրդը տարավ փառահեղ հաղթանակներ:

Հայ ժողովրդի նորօրյա սերունդը՝ ոգեշնչված Անդրանիկի և ազատագրական պայքարի մյուս մեծերի թողած պատգամներով, պատվով քննություն բռնեց արցախյան կռվի մարտերում, կրկին ապացուցելով, որ հայոց զենքն անպարտ է, եթե միասնական է ժողովուրդը: Պառակտված, քայքայված ժողովուրդը չի կարող մտածել իր ազգային փրկության

մասին: Ազգային միասնության անդրանիկյան կոչերը հույժ հրատապ են նաև մեր օրերում, հատկապես հոկտեմբերի 27-ից հետո:

Անըմբռնելի է այն, երբ այսօր աշխարհի մեծ ու հզոր պետությունները, ի տես իրենց ժողովուրդներին սպառնացող վտանգի, իմաստություն ունեն խնայելու ուժերը, ամփոփելու նյութական և մտավոր հարստությունները, ամրացնելու և գոտեպնդելու իրենց ընկերային և կուսակցական կառույցներն ու ազգային գիտակցությունը, հայ ժողովրդի պես մի փոքր ժողովուրդ, որն ամենից ավելի հիմք ունի վախենալու իր գոյությանը սպառնացող վտանգից, հետևապես ամենից շատ պետք ունի համերաշխության, ընդհակառակը, բաժան-բաժան է անում ինքն իրեն և իր ուժերը սպառում ներքին հատվածական պայքարներում:

Հավատը ամենավերջում է մեռնում: Առողջ մտածող բոլոր հայերն այսօր պատրաստ են վերադառնալու Սարդարապատի և Ղարաբաղյան շարժման օրերի եղբայրական համերաշխությանն ու միությանը: Եվ դա կլինի ամենամեծ ծառայությունը Անդրանիկի հիշատակին:

Մենք բոլորս հավատում ենք դրան: